Հաշվետվություն

*ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի գյուղապետարանի **2011 թ-ի հունվարի 1-ից** մինչև **հուլիսի 1-ը** կատարած աշխատանքների վերաբերյալ.*

- Ընթացիկ ժամանակահատվածում անցկացրել ենք ավագանու երեք նիստ, կայացրել ենք որոշումներ, պատասխանել դիմումներին և գրություններին:
- Վճարել ենք գյուղապետարանի աշխատողների հինգ ամսվա աշխատավարձը, չունենք սոց. վճարների պարտքեր:
- Կիսամյակի ընթացքում հողի հարկի հավաքագրման ցուցանիշը կազմում է 68.7%, իսկ գույքահարկինը 157%, վարձակալական հողի վճարը 58.8%:
- Նախորդ տարվա համեմատ ծաներ է հարկերի հավաքագրման գործընթացը, որի կարգավորման համար կենտրոնացրել ենք գյուղապետարանի և ավագանու ուժերը ցուցանիշը մինչև տարվա վերջ բարելավելու նպատակով:
- Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի միջոցներով կառուցվել է 1800մ. ոռոգման համակարգ:
- Կազմակերպված ձևով նախապատրաստվել ենք գարնան գյուղատնտեսական աշխատանքներին :
- Ժամանակին մաքրվել և վերանորոգվել է ներքին ոռոգման համակարգը:
- Համագործակցում ենք «ԽՈՅ» ջրամատակարար ընկերության հետ՝ համայնքը մշտական ոռոգման ջրով ապահովելու համար:
- Ստեղծվել է ժամանակավոր հանձնաժողով համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որը զբաղվում է ցորենի հնձի աշխատանքների կազմակերպման և հարկերի հավաքագրման գործընթացով:
- Համայնքի վթարայինվիճակում գտնվող միակ սնուցման կայանը փոխարինվեց նորով:
- Համայնքի բազմաթիվ ընտանիքներ օգտվում են «Հայգյուղփոխբանկի» վարկային ծրագրից. որում իր մասնակցությունը ունի գյուղապետարանը:
- Ջրմուղ կոյուղու աշխատակիցների կողմից կատարվել է համայնքի խմելու ջրի ցանցի ուսումնասիրություն և համայնքը ներկայացվել է ներդրումային ծրագրի շրջանակում հարցը լուծելու գործընթացին:
- Նշված հարցերը միշտ էլ եղել են գյուղապետի և գյուղապետարանի աշխատակիցների ուշադրության կենտրոնում, որոնց էլ փորձում ենք լուծում տալ մարզպետի անմիջական աջակցությամբ:
- Չնայած այդ ամենին ունենք գազի խնդիր որը ոչ մի կերպ չիլուծվում,անմխիթար վիճակում է գտնվում միջհամայնքային ճանապարհը:

Համայնքի ղեկավար՝ / _____ / *Ն. Հայրապետյան*
(ստորագրություն)

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Մեծարգո մարզպետ

Զեկուցագիր

Սույն թվականի հուլիսի 13-ին ժամը 15^{00}-ին գյուղապետարանի շենքում կայացավ ֆերիկ համայնքի ղեկավարի հաշվետվությունը առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

Համայնքի ղեկավարը ըստ բնագավառների մանրամասն ներկայացրեց հաշվետվություն առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ժողովին մասնակցում էին 35-40 մարդ, որի ժամանակ բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ: Սակայն կային հարցեր, որոնք առաջացրել էին համայնքի բնակիչների խիստ դժգոհությունը,

դրանք են՝

1. Համայնքի գազաֆիկացում,
2. Խմելու ջրի բարելավում,
3. Միջհամայնքային ճանապարհների վերանորոգում,